

# ԻՆՉՊԵՍ ԹԵՍՏԱՎՈՐՎԵԼ ԿԱՊԻԿԻ ԾԱՂԿԻ ՀԱՄԱՐ

Անմիջապես կապ հաստատեք բժշկի հետ, եթե ունեք նոր անբացատրելի ցան կամ վերքեր մարմնի ցանկացած հատվածում:

Սա հատկապես կարևոր է, եթե դուք շփվել եք որևէ մեկի հետ, ով ունի կամ կասկած կա, որ ունի կապիկի ծաղկի վարակ: Բժիշկը կգնահատի ձեր վիճակը և հնարավոր է, որ ցանից նմուշ վերցնի թեստի համար:

- 1 Կապ հաստատեք ձեր բժշկական ծառայությունների մատակարարի հետ  
Եթե չունեք մատակարար կամ ապահովագրություն՝
- 2 Չանգահարեք Հանրային Առողջության Չանգերի Կենտրոն  
1-833-540-0473 համարով (շաբաթը 7 օր՝ առավոտյան 8:00-ից երեկոյան 8:30-ը)  
կամ
- 3 Այցելեք Հանրային Առողջության Սեռական Առողջության Կլինիկա

Սկանավորեք QR ծածկագիրը՝ գտնելու համար [սեռական առողջության կլինիկա](https://ph.lacounty.gov/monkeypox) կամ այցելեք՝ [ph.lacounty.gov/monkeypox](https://ph.lacounty.gov/monkeypox)



Եթե կասկած կա, որ դուք կապիկի ծաղիկ ունեք, քայլեր ձեռնարկեք՝ պաշտպանելու մյուսներին, քանի դեռ ձեր բժիշկը չի բացառել, որ դա կապիկի ծաղիկ է: Սա ներառում է ձեր ցանը ծածկելը և ուրիշների հետ սերտ շփումներից խուսափելը:

Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս՝ [ph.lacounty.gov/monkeypoxisolation](https://ph.lacounty.gov/monkeypoxisolation):